Արձանագրություն N 4

«ՀՀ ԷՆ-ԵՄԾՁԲ-22/75» ծածկագրով «Հանրային ներդրումային ծրագրերի բանկի ստեղծման (հանրային ներդրումային ծրագրերի ինտեգրված թվային համակարգի ձևավորման)» նախաորակավորման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի և նախաորակավորված մասնակիցների բանակցության

ք. Երևան, Մ. Մկրտչյան **23 դեկտեմբերի 2022թ. ժամը՝ 14:00**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Սիրականյան, Ա. Սողոմոնյան,
Ա. Ավետյան

Գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Ղարիբջանյան

Մասնակիցներ՝ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամից՝ Մուրադ Մուրադյանը և Վահրամ Մատինյան և «Սիներջի ինթերնեշնըլ սիսթեմզ» ԲԸ մասնաճյուղից՝ Հայկ մանուկյանը և Լիլի Մկրյանը
ԷԿԵՆԳ ՓԲԸ-ից տնօրեն՝ Լ. Ավետիսյանը:
Ջանիկ Սևոյան Ա/Ձ-ն չէր ներկայացել, իսկ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն ընդգրկված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

1. **<u>Երկու փուլով (ԵՄ) ընթացակարգի բանակցության մասին</u>**

Քննարկման ընթացում հստակեցվեց մի շարք տեխնիկական հարցեր ինչպես նաև «Սիներջի ինթերնեշնըլ սիսթեմզ» ԲԸ մասնաճյուղի ներկայացուցչի կողմից առաջարկվեց տեխնիկական բնութագրի 4.4 կետով սահմանված առաջին փուլում իրականացվելիք (համակարգի տեխնիկական պահանջներ, համակարգի պարզաբանումներ, արտաքին մշակման առանձնահատկություններ և ներդրում՝ ներառյալ օգտագործողների համար նախատեսված ուսուցումը, համակարգի փորձարկումը և որակի ապահովում (6 ամիս ժակետով) ներդրման ժամկետը 6 ամսից դարձնել 9 ամիս:

Հիմք ընդունելով բանակցության արդյունքում հնչեցված առաջարկները և դիտողությունները պատասխանատու ստորաբաժանումը գնահատող հանձնաժողովի քարտուղարին կտրամադրի գնման վերանայված հայտը, որը պետք է ներառի գնման

առարկայի կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) վերջնական նկարագրերը, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի

անդամներ՝

_____ Լ.Սիրականյան

_____ Ա. Սողոմոնյան

_____ Ա. Ավետյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ա. Ղարիբջանյան